Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-1029-22.11.2010-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասում «պայմանագրի հիման վրա, ինչպես նաև» բառերը փոխարինել «պայմանագրով կամ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այն կազմակերպություններում, որտեղ, արտադրության բնույթով կամ այլ պայմաններով պայմանավորված, անհնար է հնգօրյա աշխատանքային շաբաթի կիրառումը, սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ մեկ հանգստյան օրով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի

Առաջարկության հեղինակը	Առաջարկության հոդվածը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Այն կազմակերպություններում, որտեղ, արտադրության բնույթով կամ այլ պայմաններով պայմանավորված, անհնար է հնգօրյա աշխատանքային շաբաթի կիրառումը, սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ մեկ հանգստյան օրով:»	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ելնելով առաջարկության բովանդակությունից փոփոխության է ենթարկվել նախագծի վերնագիրը:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի վերջում «բառերով» բառից հետո ավելացնել «իսկ 102-րդ հոդվածի 1-ին մասում «աշխատանքային պայմանագրի» բառերից հետո ավելացնել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի»» բառերը:	Չի ընդունվել: Օրենսգրքի 102-րդ հոդվածում առաջարկվող բառերն ավելացնելու անհրաժեշտություն չկա, քանի որ օրենսգրքի 83-րդ հոդվածում սահմանված է աշխատանքային պայմանագիր հասկացությունը: Այն համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, կողմերի համաձայնությամբ նախատեսված

			աշխատանքային պայմանների մասին:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում ավելացնել նոր պարբերություններ՝ հետեւյալ բովանդակությամբ. «Վերոնշյալ պայմանների առկայությունը եւ դրանց համապատասխան՝ վեցօրյա աշխատանքային շաբաթի կիրառման անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի գործադիր իշխանության հանրապետական լիազոր մարմնին ներկայացված գրավոր հիմնավորմամբ: Նշված հիմնավորման եւ արդեն կիրառված վեցօրյա աշխատանքայի շաբաթի հիմնավորվածության նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչությունը»:	Չի ընդունվել: Առաջարկվող դրույթի կիրառությունը կառաջացնի խնդիրներ, քանի որ գրավոր հիմնավորումը կարող է մի դեպքում լինել ընդունելի, մյուս դեպքում՝ անընդունելի: Հիմնավորվածության նկատմամբ հսկողություն սահմանելու մասին գրառումն անիմաստ է, քանի որ աշխատանքային ռեժիմի և աշխատանքային հարաբերությունների նկատմամբ հսկողությունն իրականացնող մարմինը աշխատանքի պետական տեսչությունն է:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)		Օրենքի նախագծի հետ մեկ փաթեթում ներկայացնել նաեւ ստորեւ նշված օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը.	Չի ընդունվել: Առաջարկությունը նախագծով կարգավորվող հարցի հետ առնչություն չունի:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)		Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169^5-րդ հոդվածի վերնագրում (կամ հոդվածի վերնագիրը խմբագրել որպես «անօրինական աշխատանք») եւ դիսպոզիցիայում ավելացնել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի» բառերը:	Չի ընդունվել: Առաջարկությունը նախագծով կարգավորվող հարցի հետ առնչություն չունի:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)		Առաջարկվում է նաև խստացնել վերոնշյալ 169^5-րդ հոդվածի սանկցիան՝ հոդվածը հռչակագրային բնույթից ազատելու համար:	Չի ընդունվել: Առաջարկությունը նախագծով կարգավորվող հարցի հետ առնչություն չունի:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)		Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում ավելացնել նոր՝ 41^4-րդ հոդված՝ պատասխանատվություն սահմանելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության հայտնաբերած վեցօրյա աշխատանքային շաբաթի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ գործադիր իշխանության հանրապետական լիազոր մարմնին գրավոր հիմնավորում չներկայացնելու կամ վեցօրյա աշխատանքային շաբաթի կիրառումը օբյեկտիվորեն հիմնավորված չլինելու փաստերի համար:	Չի ընդունվել: Առաջարկությունը նախագծով կարգավորվող հարցի հետ առնչություն չունի:
Ստյոպա Սաֆարյան (129) Անահիտ Բախշյան(128)		Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 230-րդ հոդվածում «41^2-րդ» բառից հետո ավելացնել «, 41^4-րդ» բառը:	Չի ընդունվել: Առաջարկությունը նախագծով կարգավորվող հարցի հետ առնչություն չունի: